

հասեալ, եւ 'ի դէպ է համարել մերձ յ'եօթանասուն ամ. մանաւանդ եթէ ընդունիցիմք, ըստ արքունի պատմչին, երեսնամեայ լինել եղբոր նորին անդրանկան՝ 'ի պայազատելն յամի 1175. որով հարկ է, զհայր նոցա Ստեփանէ համարել ամուսնացեալ (ընդ Ռիթայ՝ դստեր Սմբատայ տեառն Պապեռօնի) յառաջ քան զգերութիւնն 'ի Յովհաննէ կայսերէ, եւ վաղագոյն քան զեղբայր իւր Թորոս խոյս տուեալ եկեալ 'ի հայրենիս, կամ բնաւ իսկ ոչ գնացեալ 'ի գերութիւն ընդ հօրն եւ ընդ երկոցուն եղբարցն: Ապա զկիսով ԺԲ դարու ընծայեալ է Լեւոն 'ի լոյս, 'ի սկզբան քաջափայլ պայազատութեան հօրեղբոր իւրոյ Թորոսի Բ, եւ յաւուրս հայրապետութեան Բ Վկայասիրին Գրիգորի՝ եղբոր Ս. Ներսիսի Շնորհալոյ: Թէպէտ եւ եղբորորդի սոցա եւ յաջորդ՝ Գրիգոր Տղայ՝ 'ի վիպասանական Ողբս Երուսաղեմի՝ 'ի յիշել զառաջին յաղթութիւնս Լեւոնի, յայն ինչ պայազատելն՝ *մանուկ* կոչէ զնա.

«Լեւոն իշխան Կիլիկիին՝

*Մանուկ տիովք, բնութեամբ բարին».*

բայց բազում ուրեք գտանեմք առ նախնիս մեր մանուկս կոչել եւ զերիտասարդս հասունս տիօք, մանաւանդ զքաջս եւ զկորովիս:

Չիք ամենեւին յիշատակ գործոց մանկական կամ առաջին տիոց նորա. բայց որչափ է իմաստասիրել 'ի քաղաքական բազմայեղանակ դիպաց ժամանակին, եւ 'ի բարուց հօր իւրոյ Ստեփանեայ, որ միջակ իմն էր արիական զգօնութեան երիցու եղբօրն Թորոսի եւ ստահակութեան կրսերոյն՝ Սլեհի, զերեցուն եւս զոցա յարաշարժ շահատակութիւնս առաջի աչաց ունելով, հարկ է համարել եւ զԼեւոն 'ի նոյնս ախորժեալ եւ ընտելացեալ անդստին 'ի տղայութենէ. եւ ըստ անուանն՝ զառիծական ժառանգեալ ոգի հարցն եւ զտոհմին, զոր եւ 'ի բովանդակ գործս իւր է նշմարել: Այլ յեռանդն արեանն խառնեալ էր եւ հեզութիւն մայրենի զարմին՝ ազնուաբարոյիցն Հեթմեան բամբշանց. որպէս եւ առանձինն իսկ վկայեալ է վասն մօր իւրոյ՝ Ռիթայ, համշիրակի Սրբոյ Լամբրոսնեցոյն, եթէ էր «բարեպաշտօն եւ իմաստուն կինն այն, եւ երկեղած 'ի Տեառնէ». որ եւ յետ դժպիի մահուան առն իւրոյ Ստեփանեայ՝ (յամի 1165), «առեալ զորդեակս իւր գնաց 'ի Պապեռօնն՝ առ եղբայրն իւր Բակուրան, եւ անդ նստեալ սնուցանէր զնոսա»: Թէպէտ եւ հայր իւր Սմբատ՝ սպանեալ էր 'ի մարտի մղելոյ 'ի Յունաց ընդդէմ Թորոսի (առ Մսսաւ), այլ Բակուրան